

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՂԵՐՈՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՅԱՅ  
ՀԱՍԱՐԿՎՈՒԹՅԱՆ ԳԵՆԴԵՐՎՅՈՒՆ ՄՈԲԻԼՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԵԹԱՑՈՒՄ**

**Գ. Ս. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ, Ա. Ս. ՇԱԽՍՈՒԿՅԱՆ**

Գեներերային ուսումնասիրությունները վերջին տասնամյակներում արդիական են ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում: Այդ հանգամանքը պայմանավորված է մեր երկրում տեղի ունեցող ժողովրդավարական գործընթացներով, որոնցում կարևոր տեղ է զբաղեցնում նաև գեներերային իրավահավասարության հիմնախնդիրը:

Ժողովրդավարական պետություն և քաղաքացիական հասարակություն կառուցելու ձգտումը որոշակի պարտավորություններ է դնում պետության և ողջ հասարակության առջև՝ վերանայելու հայ կնոջ կարգավիճակը և հավասար պայմաններ ստեղծելու կնոջ և տղամարդու ինքնահաստատման ու զարգացման համար: Բացի այդ՝ համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ երկրի զարգացածությունն ուղիղ համեմատական է կառավարման գործընթացներում կանանց մասնակցությանը: Հետևաբար գեներերային իրավահավասարության խնդիրը չափազանց արդիական է Հայաստանի ապագայի կերտման տեսանկյունից:

Անկախացումից հետո ինչպես Հայաստանում, այնպես էլ նախկին խորհրդային հանրապետություններում կանանց վիճակը վատացավ: Քանի որ կանայք ավելի շատ ընդգրկված էին սոցիալական բնագավառի ճյուղերում՝ կրթություն, առողջապահություն, սոցիալական ապահովություն, ապա 1990-ականներին երկրում տեղի ունեցած տնտեսական կտրուկ անկումների հետևանքով նրանց զգալի մասը կորցրեց աշխատանքը: Իսկ նրանք, ովքեր կարողացան պահպանել այն, ընդգրկված են ցածր վարձատրվող ոլորտներում. այդպիսով աղքատությունը ֆեմինիզացվեց: Դրան նպաստեց նաև կանանց գլխավորությամբ ընտանիքների թվաքանակի աճը (2003 թ. կազմել է շուրջ 55 հազար), որոնք իրենց խնամքի տակ ունեն առավել խոցելի սոցիալական խմբերի շարքը դասվող ավելի քան 63.7 հազար երեխա<sup>2</sup>:

Թեև այսօր մեր իրավական դաշտը հավասար հնարավորություններ է ընձեռում կանանց և տղամարդկանց, այնուամենայնիվ անհավասարությունը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում ակնառու է: Դա ներառվում է աշխատանքային շուկայի ուղղահայաց և հորիզոնական տարբերակմամբ (սեգրեգացիա), քաղաքականության, որոշումների ընդունման ոլորտում կանանց մասնակցության ցածր մակարդակով, ինչպես նաև բարձր վարձատրվող հիմնարկություններում կանանց սահմանափակ ներկայացվածությամբ: Այսինքն՝ սոցիալական տարածության մեջ կանանց և տղամարդկանց տեղաշարժվելու հնարավորություններն անհավասար են:

Այդ մասին է վկայում նաև տարբեր ոլորտներում կանանց և տղամարդկանց զբաղեցրած դիրքերի և իշխանական կառույցներում նրանց ընդգրկվածության վերաբերյալ Հայաստանի պաշտոնական վիճակագրությունը: Ըստ պաշտոնական վիճակագրության՝ կանայք գրեթե բոլոր ոլորտների բարձրաստիճան դիրքերում զգալիորեն զիջում են

<sup>1</sup> Առողջապահության 83%, կրթության 86%, իսկ մշակույթի համակարգի աշխատակիցների 71% կանայք են (տե՛ս «Հայաստանի կանայք և տղամարդիկ. Վիճակագրական գրքույկ», Եր., 2005, էջ 66-72):

<sup>2</sup> Տե՛ս «ՀՀ Աղքատության հարցահարման ռազմավարական ծրագիր», Եր., 2003, էջ 100:

տղամարդկանց և ընդգրկված չեն երկրի համար կարևոր որոշումներ կայացնելու գործընթացներում: Վերլուծելով հայ հասարակության երեք ոլորտներում՝ կրթություն, տնտեսություն և քաղաքականություն\*, առկա գեներային իրավիճակը կարելի է համոզվել դրանում:

Այսպես օրինակ, եթե վերլուծենք կրթության ոլորտի վիճակագրական տվյալները, ապա կտեսնենք, որ կրթական աստիճանի բարձրացմանը զուգահեռ կանանց թվաքանակը նվազում է<sup>1</sup> (տես՝ աղյուսակ 1):

**Աղյուսակ 1**

**Կանանց և տղամարդկանց կրթական աստիճանը (%-ներով)**

Կրթական աստիճանը	2001		2002		2003	
	կին	տղամարդ	կին	տղամարդ	կին	տղամարդ
Մագիստրոսներ	50.7	49.3	57.4	42.6	51.8	48.2
Ասպիրանտներ	26.8	73.2	27.6	72.4	31.7	68.3
Դոկտորանտներ	10.5	89.5	10.0	90.0	42.9	57.1

Աղյուսակի տվյալների վերլուծությունը վկայում է, որ եթե մագիստրատուրա ավարտած աղջիկների և տղաների հարաբերակցությունը շեշտակիորեն չի տարբերվում, ապա ասպիրանտուրա և դոկտորանտուրա ավարտածների մեջ արդեն նշանակալիորեն գերակշռում են արական սեռի ներկայացուցիչները:

Այս երևույթն, իհարկե, կարելի է քացատրել մաս այն հանգամանքով, որ վերջին տարիներին բանակից խուսափելու պատրվակով տղաներն արհեստակամորեն ավելի շատ տեղ են զբաղեցնում ասպիրանտուրաներում: Եվ, բնականաբար, նրանց մի մասն օգտագործում է մեկնարկային այդ անհավասար պայմաններն իր կրթական և գիտական աստիճանը բարձրացնելու նպատակով:

Տնտեսության և հատկապես քաղաքականության ոլորտներում գեներային անհավասարությունն առավել ընդգծված է:

Եթե դիտարկենք բնակչության 2003 թ. զբաղվածության կարգավիճակն ըստ գեներային բաշխման, ապա պատկերը հետևյալն է.

**Աղյուսակ 2**

**Բնակչության զբաղվածության կարգավիճակն ըստ գեներային բաշխման (%-ներով)**

Կարգավիճակը	Կին	Տղամարդ
Վարձու աշխատող	48	52
Գործատու	16	84
Ինքնագրադված	34	66
Ընտանիքի աշխատող անդամ	42	58
Արտադրական/սպառ. կոոպերատ. անդամ	17	83
Ընդամենը	43	57

Աղյուսակի տվյալներից երևում է, որ սեփական գործ ունեցող և գործատու հանդիսացող տղամարդկանց տոկոսային հարաբերակցությունն անհամեմատ ավելին է (66% և 84%), մինչդեռ կանայք ավելի շատ վարձու աշխատողներ են և ընտանեկան բիզնեսի անդամներ: Այսինքն՝ կարելի է եզրակացնել, որ հայ կանայք տնտեսական նախաձեռնություններով հազվադեպ են հանդես գալիս:

\* Ոլորտների ընտրությունը պայմանավորված է դրանց վերաբերյալ պաշտոնական վիճակագրության առկայությամբ, ինչը թույլ է տալիս հիմնավորված եզրահանգումներ կատարել:

<sup>1</sup> Տես՝ «Հայաստանի կանայք և տղամարդիկ. Վիճակագրական գրքույկ», էջ 54-55: Հետագա աղյուսակների կազմման համար նույնպես հիմք են ծառայել այս գրքույկի տվյալները:

Սեռերի միջև անհավասարությունն առավել վատ է դրսևորվում քաղաքականության ոլորտում (տե՛ս աղյուսակ 3):

Աղյուսակ 3

**Իշխանական կառույցներում կանանց և տղամարդկանց հարաբերակցությունը (քացարձակ թվերով)**

Իշխանության տեսակը		2001		2002		2003	
		կին	տղամարդ	կին	տղամարդ	կին	տղամարդ
Օրենսդիր		4	127	5	126	7	124
Գործադիր*		-	-	-	-	7	93
Դատական	դատավորներ	21	79	18	82	21	79
	փաստաբաններ	35	65	34	66	38	62

Աղյուսակի տվյալները վկայում են, որ կանայք իշխանական բոլոր երեք թևերում փոքրամասնություն են: 1990-95թթ. կանայք խորհրդարանում 3% էին: Հաջորդ ընտրություններին «Շամիրամ» քաղաքական կուսակցությունը կարողացավ 8% մասնակցություն ապահովել խորհրդարանական աշխատանքներին: 1999-2003 թթ. կանայք դարձյալ 3% էին, իսկ ներկայումս՝ 5,3%:

Հետաքրքիրն այն է, որ նույն գործադիր իշխանության համակարգի նախարարություններում աշխատող կանանց և տղամարդկանց հարաբերակցությունը էականորեն չի տարբերվում՝ 2353 և 2560: Ավելին, ՀՀ կառավարության աշխատակազմում կանայք կազմում են 54%, մինչդեռ տղամարդիկ՝ ընդամենը 46%: Իսկ նախագահի աշխատակազմում գեներային իրավիճակը ճիշտ հակառակն է:

Մանրամասնորեն չներկայացնելով մարզային իշխանություններում գեներային վիճակը՝ նշենք, որ մինչ այսօր Հայաստանում ոչ մի կին մարզպետ չի նշանակվել. ունենք միայն մարզպետի 1 կին տեղակալ և աշխատակազմի 2 ղեկավար: Հարկ է նշել, որ մարզային իշխանությունների կազմում ևս շարքային կին աշխատակիցները զգալիորեն քիչ են տղամարդկանցից, ինչը թույլ է տալիս ենթադրելու, որ Երևանից դուրս կանանց հնարավորություններն ավելի սահմանափակ են:

Այսպիսով, վիճակագրական վերոհիշյալ տվյալները թույլ են տալիս եզրակացնել, որ ողբան իշխանության լիազորությունները մեծանում են, այնքան այդ օղակներում կանանց ընդգրկվելու հնարավորությունները նվազում են:

Ինչո՞վ է պայմանավորված հայ հասարակությունում գեներային այսպիսի խտրականությունը: Պատճառները և բացատրությունները տարբեր են և բազմաբնույթ: Հիմնական պատճառներից մեկն այն է, որ սոցիալական մորթիլության համար անհրաժեշտ ուսուցումները կանանց և տղամարդկանց համար հավասարապես մատչելի չեն:

Ավանդաբար սոցիալական մորթիլության համար կարևոր ուսուցումներ են համարվել բնական, տնտեսական և մարդկային կապիտալները: Սակայն ժամանակի ընթացքում պարզ դարձավ, որ միայն այդ ուսուցումները բավական չեն, և դրանց շարքում բացակայող օղակը սոցիալական կապիտալն է: Այս հասկացությունը շրջանառության մեջ է դրել ժամանակակից ամերիկացի սոցիոլոգ և տնտեսագետ Ջեյմս Զոլմանը (1926-1995), համաձայն որի սոցիալական կապիտալն ընդգրկում է բազմաթիվ բաղադրիչներ, որոնք բնութագրվում են երկու ընդհանուր հատկությամբ. ա) դրանք մախ և առաջ կազմված են մի քանի սոցիալական կառուցվածքներից, և բ) դրանք հեշտացնում են սուբյեկտի որոշակի գործողությունները կառուցվածքի ներսում՝ լինի դա անհատ, թե կազմակերպություն: Ընդհանուր առմամբ սոցիալական կապիտալը նպաստում է նպատակների իրագործմանը, և վերջինիս բացակայության դեպքում դրանց անհմար է հասնել:

\* 2001 և 2002 թթ. գործադիր ոլորտի վերաբերյալ տվյալները բացակայում են: 2003 թ. վիճակագրական տվյալներում ներառված չեն ուժային նախարարությունները: Հաշվարկվել են միայն նախարարները և փոխնախարարները:

\* Տե՛ս Дж. Кулман, Капитал социальный и человеческий, - "Общественные науки и современность", 2001, № 36, էջ 124:

Մեկ այլ մոտեցում է առաջարկում ֆրանսիացի սոցիոլոգ, հետստրուկտուրալիստական ուղղության ներկայացուցիչ Պիեռ Բուրդյեն (1930-2002), որը սոցիալական կապիտալը դիտարկում է սոցիալական կառուցվածքի համատեքստում: Սոցիալական կապիտալը Բուրդյեն սահմանում է իբրև «իրական կամ էպոտենցիալ ռեսուրսների ամբողջություն, որոնք կապված են փոխադարձ ծանոթության և այս կամ այն չափով ինստիտուցիոնալացված հարաբերությունների կայուն ցանց ունենալու, այսինքն՝ խմբին անդամակցելու հետ»: Կապիտալների տարբեր տեսակների բաշխումն ու կառուցվածքը ժամանակի տվյալ պահին ներկայացնում է սոցիալական աշխարհի կառուցվածքը<sup>3</sup>:

«Սոցիալական կապիտալ» հասկացության զարգացման գործում մեծ ներդրում ունի նաև ամերիկացի քաղաքագետ Ռոբերտ Փաթենը (1941), որը սոցիալական կապիտալը սահմանում է որպես «սոցիալական կազմակերպության այնպիսի բնութագրիչներ (սոցիալական ցանցեր, նորմեր, վստահություն), որոնք նպաստում են համագործակցությանը՝ համատեղ նպատակներին հասնելու համար»<sup>4</sup>:

Այսպիսով, ընդհանրացնելով «սոցիալական կապիտալ» հասկացության վերաբերյալ առկա մոտեցումները՝ կարելի է տալ «սոցիալական կապիտալ» հասկացության հետևյալ բնորոշումը. սոցիալական կապիտալը սոցիալական հարաբերությունների մեջ ներդրվող, վստահության և փոխադարձության նորմերով կարգավորվող կապերի ամբողջություն է, որը նպաստում է շահագործակցությանն ու կոլեկտիվ գործունեությանը:

Սոցիալական կապիտալը, ինչպես և կապիտալի այլ ձևերը, տարբեր ծավալներ ունեն և տարբեր կերպ են կուտակվում ու օգտագործվում կանանց և տղամարդկանց կողմից, ինչը նրանց տալիս է սոցիալական տարածությունում տեղաշարժելու տարբեր հնարավորություններ: Այս ամենը պայմանավորված է նրանով, որ կանանց և տղամարդկանց սոցիալական կապիտալի բովանդակությունը տարբեր է, տարբեր են նաև նրանց բնորոշ սոցիալական ցանցերը, վստահության և փոխադարձության նորմերը:

Կարծում ենք, որ հասարակությունը, չիբախուսելով գենդերային հավասարությունը և կանանց ուղղահայաց մոբիլությունը, համապատասխան մեխանիզմների միջոցով (տվյալ դեպքում՝ գենդերային սոցիալականացման) փորձում է «խոչընդոտել» այն բոլոր կապիտալների ստեղծումը, կուտակումը և օգտագործումը, որոնք կարող են շեշտակիորեն բարձրացնել կնոջ՝ հասարակության մեջ զբաղեցրած դիրքը: Դրան հակառակ՝ տղամարդիկ ինտենսիվ կերպով ստեղծում, կուտակում և օգտագործում են այդ կապիտալները:

Այս վարկածը ստուգելու համար Երևանում իրականացրել ենք սոցիոլոգիական հետազոտություն, որի նպատակն էր պարզել սոցիալական կապիտալի ստեղծման, կուտակման և կիրառման գենդերային առանձնահատկությունները: Ներկայացնենք հետազոտության արդյունքների վերլուծությունն ըստ սոցիալական կապիտալի տարրերի:

Սոցիալական կապիտալի առաջին կարևոր բաղադրիչը սոցիալական ցանցն է, որն ազդում է սոցիալական կապիտալի ծավալների և բնույթի վրա: Սոցիալական ցանցի ուսումնասիրման ժամանակ առաջին կարևոր չափանիշը ցանցի տեսակն է ըստ ֆորմալության մակարդակի, որը որոշվում է ընտանեկան, բարեկամական կապերի, ընկերական և հարևանային հարաբերությունների (ոչ ֆորմալ ցանց), դրանց ինտենսիվության, ինչպես նաև տարբեր տեսակի կազմակերպություններին և միություններին անդամակցության (ֆորմալ ցանց) ուսումնասիրման միջոցով:

Սոցիոլոգիական հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ կանանց սոցիալական ցանցերում առավել կարևոր է ընտանեկան և բարեկամական, ինչպես նաև հարևանային կապերի նշանակությունը, մինչդեռ տղամարդկանց սոցիալական ցանցերում կարևոր են հատկապես ընկերական հարաբերությունները:

<sup>3</sup> Shu P. Bourdieu, *The forms of capital*, edited by Reinhard Kreckel. Goettingen, 1983, էջ 250-243:

<sup>4</sup> Shu R. Putnam, *The Prosperous Community - Social Capital and Public Life*, - "The American prospect", № 13, 1993, էջ 36:

Եթե դիտարկենք ֆորմալ ցանցերին անդամակցությունը, ապա կտեսնենք, որ բևեռացման աստիճանը ավելի բարձր է, քան անհամայնակցության աստիճանը: Հարցված կանայք, ընդհանուր առմամբ, ավելի ակտիվ անդամակցում են հասարակական կազմակերպություններին, արհմիություններին, մասնագիտական ասոցիացիաներին (քիչ չկան միայնակ, հոգեբույժների միջազգային ասոցիացիա և այլն), մշակութային միություններին, կրոնական կազմակերպություններին, իսկ տղամարդիկ՝ քաղաքական կազմակերպություններին: Այս տարբերությունները պայմանավորված են նրանով, որ հասարակության մեջ գոյություն ունի մասնագիտական ոլորտների գեներացիաների մասնավորություն, համաձայն որի «կանացի» են համարվում կրթության, առողջապահության, սոցիալական և մշակույթի ոլորտների մասնագիտությունները, իսկ քաղաքականության կերտումն ավանդաբար համարվում է տղամարդկային գործունեության ոլորտ: Այս ամենի հետևանքով կանայք Հայաստանում փաստորեն դուրս են մնացել ակտիվ քաղաքականության կերտում, որոշումների կայացման գործընթացից: Քանի որ քաղաքական կազմակերպություններին անդամակցությունը իրական հնարավորություն է ընձեռում իշխանություն ձեռք բերելու, հասարակությունում ավելի բարձր դիրք գրավելու համար, ուստի կարելի է ասել, որ, ի տարբերություն կանանց, տղամարդկանց ակտիվությունն այս ոլորտում պայմանավորված է իշխանություն ունենալու և սոցիալական կարգավիճակը փոխելու ձգտումով, ինչը ավելի հազվադեպ է արտահայտվում կանանց մոտ:

Այսպիսով հիմնավորելու համար կրկին օգտվենք պաշտոնական վիճակագրությունից և ներկայացնենք ՀՀ Ազգային Ժողովի պատգամավորների գեներացիան կազմն ըստ քաղաքական կուսակցությունների և խմբակցությունների:

**Աղյուսակ 4**

**ՀՀ Ազգային Ժողովի պատգամավորների գեներացիան կազմն ըստ խմբակցությունների (բացարձակ թվերով)**

<i>Խմբակցություններ և պատգամավորական խմբեր</i>	<i>Կին</i>	<i>Տղամարդ</i>
«Հայաստանի Հանրապետական կուսակցություն» խմբակցություն	2	38
«Օրինաց Երկիր» խմբակցություն	1	19
«Արդարություն» խմբակցություն	-	14
«Հայ հեղափոխական դաշնակցություն» խմբակցություն	2	9
«Ազգային միաբանություն» խմբակցություն	-	9
«Միավորված աշխատանքային կուսակցություն» խմբակցություն	1	5
«Ժողովրդական պատգամավոր» պատգամավորական խումբ	-	17
Խմբակցություններում և պատգամավորական խմբերում չներկայացված պատգամավորներ	1	13
<b>Ընդամենը</b>	<b>7</b>	<b>124</b>

Ինչպես փաստում են աղյուսակի տվյալները, կանայք պատգամավորական խմբակցություններում կազմում են ՀՀ Ազգային Ժողովի պատգամավորների ընդամենը 5,3 %-ը:

Սոցիալական ցանցերի գեներացիան առանձնահատկություններից է այն, որ կանանց հիմնականում բնորոշ են *համասեռ ցանցերը*, իսկ տղամարդկանց՝ *տարասեռ*: Մանչևանկություն է, որ կանանց սոցիալական ցանցերում հիմնականում ընդգրկված են տարբեր բնութագրիչներով միմյանց նման մարդիկ (սեռ, տարիք, կրթություն, քաղաքական և կրոնական հայացքներ, տնտեսական դրություն և գործունեության ոլորտ): Կանայք հիմնականում կապեր են հաստատում նույնատիպ հատկանիշներով մարդկանց հետ, այն դեպքում, երբ տղամարդկանց սոցիալական ցանցերում ընդգրկված մարդիկ հիմնականում նշված բնութագրիչներով տարբերվում են<sup>7</sup>:

<sup>7</sup> Shu Stone Wendy, Measuring social capital.- «Research Papers», № 24, 2001, էջ 22-23:

Սոցիալական ցանցերի ծավալները նույնպես տարբեր են: Տղամարդկանց նեղ շրջապատում (առավել ինտենսիվ շփումների ոլորտում) ընդգրկված մարդկանց միջին քիվը 17 է, մինչդեռ կանանց նեղ շրջապատում ընդգրկված մարդկանց միջին քիվը՝ 12: Սոցիալական ցանցի չափերը մեծ նշանակություն ունեն սոցիալական կապիտալի ընդհանուր պատկերի տեսանկյունից: Բանն այն է, որ սոցիալական կապերի քանակը ուղիղ համեմատական է սոցիալական կապիտալի հնարավոր մեծությանը: Քանի որ կանայք, ինչպես նշվեց, ավելի հակված են սահմանափակել իրենց սոցիալական ցանցերը ոչ ֆորմալ, ընտանեկան/բարեկամական և ընդհանրապես կայացած ամուր կապերով, ապա դժվարությամբ հաղթահարելու, որոշումներ կայացնելու կամ հաջողության հասնելու նրանց հնարավորություններն ավելի քիչ են: Ընդհակառակը, տղամարդիկ ավելի լայն և բազմազան ցանց ունեն, որից անհրաժեշտության դեպքում կարող են ստանալ աջակցություն և հասնել իրենց նպատակներին: Կանանց սոցիալական ցանցերի ծավալների սահմանափակությունը պայմանավորված է նրանով, որ թեպետ այսօր նրանցից շատերն ունեն աշխատանք, այնուամենայնիվ աշխատանքի ավանդական բաժանումը կանանց և տղամարդկանց միջև ենթադրում է, որ կանանց կենսագործունեությունը ծավալվում է հիմնականում ընտանիքում՝ տանը: Հետևաբար՝ նրանց սոցիալական ցանցի աշխարհագրական շատավիճակ ավելի փոքր է, քան տղամարդկանց, ում ակտիվությունն ուղղված է տնից դուրս՝ ընտանիքի արտաքին կապերի ստեղծմանն ու պահպանմանը:

Կանանց համար սոցիալական կապիտալ ձևավորելու տեսանկյունից բավականին մեծ է ամուսնության նշանակությունը, և իրենց սոցիալական ցանցերում հաճախ հիմնական տեղը զբաղեցնում է ամուսնու շրջապատը:

Սոցիալական կապիտալի առանցքային հասկացություններից մեկը *վստահությունն* է: Այն կարևորվում է հատկապես քաղաքացիական հասարակության տեսանկյունից: Ընդհանուր առմամբ ընդունված է առանձնացնել երեք տեսակի վստահություն՝ մասնավորեցված, որը վստահությունն է մտերիմների, ծանոթների միջև, և առկա է կայացած հարաբերությունների, կայացած սոցիալական ցանցերի դեպքում: Երկրորդ տեսակը կոչվում է ընդհանրացված վստահություն, որը տարածվում է նաև անծանոթների վրա հաճախ ընդհանուր արժեքների առկայության շնորհիվ: Վստահության երրորդ տեսակը վերաբերում է կառավարման ֆորմալ ինստիտուտներին: Հետազոտության տվյալները ցույց են տալիս, որ կանանց շրջանում գերակշռում է անձնավորված վստահությունը: Հարցված կանանցից շատերը մարդուն վստահելու համար կարևորում են նրա հետ երկար ժամանակ ծանոթ լինելը, այսինքն՝ նրանք հակված են վստահելու այն դեպքում, երբ կան ամուր, կայացած հարաբերություններ: Քանի որ վստահությունը սոցիալական հարաբերությունների ցանցերի ստեղծման կարևոր նախապայման և դրանց պահպանման գլխավոր նորմ է, ուստի, ընդհանուր առմամբ, կանանց շրջանում վստահությամբ ավելի ցածր մակարդակն ինքնին սոցիալական ցանցերի սահմանափակման պատճառ է դառնում: Տղամարդկանց հիմնականում ավելի բնորոշ է ընդհանրացված վստահությունը: Ինստիտուցիոնալ վստահության գենդերային առանձնահատկությունները պայմանավորված են նրանով, որ և՛ կանայք, և՛ տղամարդիկ ավելի հակված են վստահել այն համակարգերին, որոնց վերաբերյալ իրենք ավելի տեղեկացված են կամ ընդգրկված են հենց այդ համակարգերում: Հետազոտության արդյունքները վկայում են, որ տղամարդիկ ավելի հաճախ կարևորում են վստահությունը գործնական ոլորտում և այն համարում հաջողության երաշխիք: Մինչդեռ կանայք վստահությունը համարում են հանգիստ և ապահով կյանքի զրավական:

Հատկանշական է այն, որ կանայք հաճախ խոսում են ոչ թե ուրիշների նկատմամբ իրենց վստահության մասին, այլ իրենց նկատմամբ ուրիշների վստահության մասին, ինչը նրանց հաղորդում է համոզվածություն և համարձակություն: Մա վկայում է այն մասին, որ կանանց ինքնազնահատականը մեծապես կախված է շրջապատի գնահատականից, և այդ առումով շրջապատը և նրա վստահությունը շատ կարևոր են կնոջ ինքնահաստատման համար: Այս երևույթը վկայում է, որ մեր հասարակությունը կնոջը պատկերում է որպես պասիվ, կախյալ անձնավորություն, որի կերպարը վերարտադրվում է սոցիալակա-

նացման միջոցով: Դա ոչ միայն խոչընդոտում է կնոջ անձնային աճին և սոցիալական մտքի ծաղկումը, այլև նպաստում է ողջ հասարակությունում պահպանողականության և հայրիշխանական արժեքների վերարտադրմանը, ինչն էլ իր հերթին հակասում է այսօր մեր հասարակության կողմից որդեգրած ժողովրդավարական արժեքներին և խոչընդոտում դրանց ամրապնդման գործընթացին:

Սոցիալական կապիտալի տարբեր քաղաքիչների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կանանց հիմնականում բնորոշ է *կապող սոցիալական կապիտալը*, այսինքն՝ ամուր փոխադարձ կապերը, որոնք առկա են (ընտանիքի անդամների կամ միևնույն սոցիալական խմբերի անդամների միջև) փոքր սոցիալական խմբերում կամ հիմնվում են ազգակցական, ընտանեկան և էթնիկ հարաբերությունների վրա: Իսկ *կամրջող սոցիալական կապիտալը* հիմնականում բնորոշ է տղամարդկանց և բնութագրվում է տարբեր սոցիալական խմբերի միջև ավելի թույլ կապերով: Ինչ վերաբերում է *շղթայող սոցիալական կապիտալին*, այսինքն՝ ուղղահայաց սոցիալական հարաբերություններին<sup>6</sup>, ապա դրանք ևս ավելի բնորոշ են տղամարդկանց: Սա նշանակում է, որ տղամարդիկ ավելի հակված են փոխելու իրենց սոցիալական դիրքը, կողմնորոշված են դեպի ձեռքբերովի կարգավիճակները, ուղղահայաց մոբիլությունը, մինչդեռ կանայք հիմնականում հակված են պահպանելու իրենց վերագրված կարգավիճակները:

Սոցիալական կապիտալը կարող է տարբեր նշանակություն ունենալ մարդկանց կյանքում՝ կախված այն բանից, թե ինչպես է այն օգտագործվում:

Ավանդաբար մեր հասարակությունում շրջապատը (ընկերական, գործընկերային, բարեկամական և այլն) ավելի մեծ կարևորություն է ունեցել տղամարդկանց համար: Դեռևս մանուկ հասակում և նաև հետագա տարիներին տղաներին փոխանցվում է շրջապատ ձևավորելու և պահպանելու մշակույթը: Սոցիալականացման ընթացքում թեև շրջապատի հետ շփումները գիտականորեն համարվում են կարևոր թե՛ տղաների և թե՛ աղջիկների համար, մեր մշակույթում այն ավելի մեծ նշանակություն է ստանում տղաների համար և հետագայում էլ ավելի կարևորվում տղամարդկանց կողմից:

Հետազոտության արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ տղամարդկանց համար շրջապատը գործիքային, իսկ կանանց համար էքսպրեսիվ դեր ունի: Հարցված տղամարդիկ կարևորում են շրջապատը որպես մարդ ձևավորվելու, հասարակությունում բարձր դիրք գրավելու, հաջողության հասնելու, հենարան ունենալու և լավագույնս ներկայացվելու համար: Բացի այդ՝ տղամարդիկ համոզված են նաև, որ շրջապատն ավելի մեծ հնարավորություններ է տալիս մարդուն, թույլ է տալիս խնայել ժամանակը, ճիշտ ընտրություն կատարել, աշխատանքն արդյունավետ իրականացնելու համար ձևավորել լավ թիմ: Ի տարբերություն տղամարդկանց՝ կանայք շրջապատը կարևորում են հոգեկան բավարարվածության, աջակցության, դաստիարակվելու, կարծիքը հստակ առնելու, գնահատվելու, խորհուրդ հարցնելու, ինչպես նաև ապահով զգալու համար:

Փաստորեն, եթե տղամարդկանց համար սոցիալական կապիտալը կարող է դառնալ առաջնահայացման գործոն, ապա կանանց համար, ընդհակառակը, այն ավելի հաճախ ծառայում է որպես առաջընթացից հետ պահող, հարմարվողականություն ձևավորող գործոն, որը խոչընդոտում է կանանց քաղաքացիական ակտիվությունը և, ընդհակառակը, նպաստում տնային տնտեսության ոլորտում նրանց դիրքի ամրապնդմանը: Այս տարբերությունները պայմանավորված են մեր հասարակությունում գենդերային դերերի վերաբերյալ առկա պատկերացումներով, որոնք վերարտադրվում են սոցիալականացման ընթացքում, և քանի որ սոցիալական կապիտալը սկսում է ձևավորվել և կուտակվել կրկին սոցիալականացման ընթացքում, ուստի դրա գենդերային առանձնահատկությունները ևս վերարտադրվում են:

<sup>6</sup> Շղթայող սոցիալական կապիտալը ենթադրում է տարբեր սոցիալական կարգավիճակ կամ իշխանության մակարդակ ունեցողների միջև կապեր, օրինակ՝ քաղաքական ընտրախավի և ժողովրդի կամ տարբեր սոցիալական դասերին պատկանող անհատների միջև (տե՛ս Stephen A. Kridger, David Halpern, "Social Capital: A Discussion Paper", 2002, էջ 11-12):

Քանի որ քաղաքացիական հասարակության կայացման կարևոր նախապայմաններից մեկը սոցիալական, տնտեսական, քաղաքական կյանքին իր անդամների հավասար մասնակցությունն է, ուստի գենդերային անհավասարության վերարտադրությունը մեր հասարակությունում, նույնիսկ սոցիալական կապիտալի առումով, կարող է լուրջ խոչընդոտ դառնալ ողջ հասարակության զարգացման և հատկապես որպես քաղաքացիական հասարակություն կայանալու համար:

Իհարկե միամտություն կլիներ կարծել, թե դարեր շարունակ գոյություն ունեցող գենդերային շերտավորման համակարգը մեկ տասնամյակում արմատապես կփոխվի, և որ հասարակությունը (ընդ որում, այստեղ կարևոր է նշել, որ թե՛ տղամարդիկ և թե՛ կանայք հավասարապես) ինքնակամ և հեշտությամբ կիրառարվի այդ հիմնախնդրի նկատմամբ ունեցած իր վերաբերմունքից: Սակայն, կարծում ենք, որ թերևս անհրաժեշտություն կա արմատապես վերափոխելու գենդերային հիմնախնդրի վերաբերյալ հասարակության մեջ առկա պատկերացումները, ինչը կնպաստի ոչ միայն առանձին անհատների զարգացմանը և նրանց անհատական մոբիլությանը, այլ նաև կիսրանի ժողովրդավարական և իրավահավասար պետության կայացման գործընթացին:

**Г. М. ТАДЕВОСЯН, А. С. ШАХСУВАРЯН — Роль социального капитала в процессе гендерной мобильности в современном армянском обществе.** — Стремление построить демократическое государство и гражданское общество ставит определённые обязанности перед государством и всем обществом. Одной из этих обязанностей является пересмотр статуса женщины в обществе и создание равных возможностей личностного развития и социального продвижения для женщин и мужчин. Несмотря на то, что юридически мужчины и женщины в нашем обществе имеют равные возможности, существует гендерное неравенство в разных областях общественной жизни. Возможности женщин и мужчин передвигаться в социальном пространстве неравны. Конечно же, тому есть немало причин, однако одна из главных — это то, что необходимые для социальной мобильности ресурсы доступны женщинам и мужчинам не в равной мере. Традиционно необходимыми ресурсами социальной мобильности считались натуральный, финансовый и человеческий капиталы. Со временем стало ясно, что этих ресурсов недостаточно и к ним прибавился социальный капитал. Социальный капитал, как и все виды капиталов, накапливается и используется женщинами и мужчинами неодинаково, что даёт им разные возможности социальной мобильности. В статье обсуждаются гендерные особенности создания, накопления и использования социального капитала в процессе социальной мобильности.